

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ
ՊԱՏԱՆԴՆԵՐ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ
ԿՈՆՎԵՆՑԻԱ

Սույն Կոնվենցիայի Կողմ պետությունները՝

նկատի ունենալով Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության՝ միջազգային խաղաղության եւ անվտանգության պահպանության վերաբերյալ նպատակներն ու սկզբունքները եւ պետությունների միջեւ բարեկամական հարաբերությունների եւ համագործակցության զարգացումը.

ընդունելով, մասնավորապես, որ յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության եւ անձի անվտանգության իրավունք, որը նախատեսված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով եւ Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով.

վերահաստատելով Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ, Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությանը համապատասխան՝ պետությունների միջեւ համագործակցության եւ բարեկամական հարաբերությունների վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրով, ինչպես նաեւ Գլխավոր Ասամբլեայի համապատասխան այլ բանաձեւերով ամրագրված՝ ժողովուրդների հավասարության իրավունքը եւ ինքնորոշման սկզբունքը.

հաշվի առնելով, որ պատանդներ վերցնելը համարվում է միջազգային հանրության լուրջ մտահոգությունն առաջացնող հանցագործություն եւ այն, որ պատանդներ վերցնող յուրաքանչյուր անձ պետք է սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան քրեական հետապնդման ենթարկվի կամ հանձնվի.

համոզված լինելով, որ անհրաժեշտ է պետությունների միջեւ զարգացնել միջազգային համագործակցությունը՝ որպես միջազգային ահաբեկչության դրսեւորում՝ պատանդներ վերցնելու բոլոր գործողությունները կանխելու, հետապնդելու եւ պատժելու համար՝ արդյունավետ միջոցներ մշակելու եւ ընդունելու նպատակով.

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՅՈՂՎԱԾ 1

1. Սույն Կոնվենցիայի իմաստով պատանդներ վերցնելու հանցագործություն կատարած անձ է համարվում այն անձը, որը վերցնում կամ պահում եւ սպառնում է սպանել, վնաս հասցնել կամ շարունակել պահել (պատանդներ վերցնելը) այլ անձանց (այսուհետ՝ պատանդ)՝ նպատակ ունենալով ստիպելով երրորդ կողմին, մասնավորապես՝ պետությանը, միջազգային միջկառավարական կազմակերպությանը, ֆիզիկական կամ իրավաբանական անձին կամ անձանց խմբին՝ կատարել որեւէ գործողություն կամ ձեռնպահ մնալ դրա կատարումից՝ պատանդին ազատելը դնելով որպես ակնհայտ կամ ոչ ակնհայտ պայման:

2. Սույն Կոնվենցիայի նպատակների համար հանցագործություն կատարած անձ է համարվում այն անձը՝

ա) որը փորձում է կատարել պատանդ վերցնելու գործողություն, կամ.

բ) հանցակից է որեւէ անձի, որը կատարում է կամ փորձում է կատարել պատանդ վերցնելու գործողություն, մասնակցում է դրան:

ՅՈՂՎԱԾ 2

Յուրաքանչյուր Կողմ պետությունն համապատասխան պատժամիջոցներ է սահմանում 1-ին հոդվածով նախատեսված հանցագործությունների կատարման համար՝ հաշվի առնելով դրանց ծանր բնույթը:

ՅՈՂՎԱԾ 3

1. Այն Կողմ պետությունը, որի տարածքում հանցագործը պահում է պատանդին, պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք նպատակահարմար կհամարի, որպեսզի թեթևացնի պատանդի վիճակը, մասնավորապես՝ ապահովի նրա ազատումը եւ ազատվելուց հետո դյուրացնի համապատասխան դեպքում նրա մեկնումը:

2. Եթե պատանդներ վերցնելու արդյունքում հանցագործի կողմից ձեռք բերված ցանկացած առարկա հայտնվում է Կողմ պետության տիրապետության ներքո, ապա նա որքան հնարավոր է շուտ այն վերադարձնում է պատանդին կամ 1-ին հոդվածով նախատեսված երրորդ կողմին կամ՝ ելնելով հանգամանքներից, համապատասխան մարմիններին:

ՅՈՒՐԱԿՐԻ 4

Կողմ պետությունները պետք է համագործակցեն 1-ին հոդվածով նախատեսված հանցագործությունների կանխման գործում, մասնավորապես՝

ա) իրենց համապատասխան տարածքներում ձեռնարկելով գործնական բոլոր միջոցները այդ տարածքներում կամ դրանցից դուրս հանցագործությունների կատարման նախապատրաստումը կանխելու համար, ներառյալ՝ այն միջոցները, որոնք իրենց տարածքներում արգելում են այն անձանց, խմբերի եւ կազմակերպությունների կողմից անօրինական գործողությունները, որոնք խրախուսում, դրդում, կազմակերպում կամ մասնակցում են պատանդ վերցնելու գործողությունների կատարմանը.

բ) փոխանակելով տեղեկատվություն եւ համակարգելով այդ հանցագործությունների կանխմանն ուղղված համապատասխան վարչական եւ այլ անհրաժեշտ միջոցառումները:

ՅՈՒՐԱԿՐԻ 5

1. Յուրաքանչյուր Կողմ պետություն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում 1-ին հոդվածով նախատեսված հանցագործությունների նկատմամբ իր իրավագործությունը հաստատելու համար, երբ հանցագործությունները կատարվում են՝

ա) իր տարածքում կամ տվյալ պետությունում գրանցված օդանավում կամ նավում.

բ) տվյալ պետության քաղաքացու կողմից կամ՝ եթե պետությունը նպատակահարմար է գտնում, քաղաքացիություն չունեցող անձանց կողմից, որոնք մշտապես բնակվում են նրա տարածքում.

գ) տվյալ պետությանը հարկադրելով կատարելու ցանկացած գործողություն կամ ձեռնպահ մնալ դրա կատարումից, կամ

դ) տվյալ պետության քաղաքացի հանդիսացող պատանդի նկատմամբ, եթե տվյալ պետությունը նպատակահարմար է գտնում:

2. Յուրաքանչյուր Կողմ պետություն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում՝ 1-ին հոդվածով նախատեսված հանցագործությունների նկատմամբ իր իրավագործությունը նաեւ այն դեպքերում տարածելու համար, երբ ենթադրյալ հանցագործը գտնվում է իր տարածքում եւ նա այդ անձին չի հանձնում սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված որեւէ Կողմ պետության:

3. Սույն Կոնվենցիան չի բացառում ներպետական օրենսդրությանը համապատասխան ցանկացած քրեական իրավագործության իրականացումը:

ՅՈՒՐԱԿՐԻ 6

1. Համոզված լինելով, որ հանգամանքները դա են պահանջում, ցանկացած Կողմ պետություն, որի տարածքում է գտնվում ենթադրյալ հանցագործը, իր օրենսդրությանը համապատասխան նրան կալանքի է վերցնում կամ անհրաժեշտ այլ միջոցներ է ձեռնարկում քրեական հետապնդում կամ հանձնման վարույթ հարուցելու նպատակով տվյալ անձի ներկայության համար: Տվյալ Կողմ պետությունն անհապաղ իրականացնում է փաստերի նախաքննություն:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված կալանքի կամ այլ միջոցների

կիրառման մասին՝ ուղղակիորեն կամ Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր քարտուղարի միջոցով, անհապաղ ծանուցվում են՝

- ա) այն պետությունը, որտեղ կատարվել է հանցագործությունը.
- բ) այն պետությունը, որի դեմ ուղղված կամ նախաձեռնված է եղել հարկադրանքը.
- գ) այն պետությունը, որի քաղաքացու կամ իրավաբանական անձի դեմ է ուղղված կամ նախաձեռնված եղել հարկադրանքը.
- դ) այն պետությունը, որի քաղաքացի է հանդիսանում պատանդը, կամ որի տարածքում կա մշտապես բնակվում է.
- ե) այն պետությունը, որի քաղաքացի է հանդիսանում ենթադրյալ հանցագործը, կամ՝ եթե քաղաքացիություն չունեցող անձ է, պետությունը, որի տարածքում կա մշտապես բնակվում է.
- զ) միջազգային միջկառավարական կազմակերպությունը, որի դեմ է ուղղված կամ նախաձեռնված եղել հարկադրանքը.

է) բոլոր այլ շահագրգիռ պետությունները:

3. Յուրաքանչյուր անձ, որի նկատմամբ ձեռնարկվել են սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված միջոցները, իրավունք ունի՝

ա) առանց հետաձգման կապվել իր քաղաքացիության պետության ամենամոտ համապատասխան ներկայացուցչի կամ այն պետության ներկայացուցչի հետ, որն այլ ձեռով իրավասու է նման կապ հաստատել, կամ՝ եթե տվյալ անձը քաղաքացիություն չունի, ապա այն պետության, որի տարածքում կա մշտական բնակության վայր ունի.

բ) տվյալ պետության ներկայացուցչի այցելության:

4. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված իրավունքները իրականացվում են այն պետության օրենքներին եւ կանոնակարգերին համապատասխան, որի տարածքում գտնվում է ենթադրյալ հանցագործը՝ պայմանով, սակայն, որ նշված օրենքները եւ կանոնակարգերը նպաստեն այն նպատակների ամբողջական իրագործմանը, որոնց համար տրամադրվել են սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված իրավունքները:

5. Սույն հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի դրույթները չպետք է վնասեն 5-րդ հոդվածի 1-ին կետի "բ" ենթակետի համաձայն իրավագործություն ստանալու իրավունք ունեցող որեւէ Կողմ պետության իրավունքին՝ իրավիրելու Կարմիր խաչի միջազգային կոմիտեին՝ ենթադրյալ հանցագործին այցելելու կամ նրա հետ հաղորդակցվելու համար:

6. Պետությունը, որն իրականացնում է սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված նախաքննությունը, սույն հոդվածի 2-րդ կետում նշված պետություններին կամ կազմակերպությանը անհապաղ հայտնում է վարույթի արդյունքները եւ նշում, թե ինքը մտադիր է արդյոք իրավագործություն իրականացնել:

ՅՈՒՐԱԿՐԻՏ

Կողմ պետությունը, որի տարածքում հետապնդվում է ենթադրյալ հանցագործը, իր օրենսդրությանը համապատասխան, Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր քարտուղարին հայտնում է վարույթի վերջնական արդյունքների մասին, որն այդ տեղեկատվությունը փոխանցում է այլ շահագրգիռ պետություններին եւ շահագրգիռ միջազգային միջկառավարական կազմակերպություններին:

ՅՈՒՐԱԿՐԻՏ

1. Եթե Կողմ պետությունը, որի տարածքում գտնվում է ենթադրյալ հանցագործը, չի հանձնում տվյալ անձին, ապա պարտավորվում է առանց որեւէ բացառության եւ անկախ նրանից՝ հանցագործությունն իր տարածքում է կատարվել, թե ոչ, գործը հանձնել իր իրավասու մարմիններին՝ իր օրենսդրությանը համապատասխան դատավարության միջոցով դատական հետապնդում իրականացնելու համար: Այդ մարմինները որոշում են ընդունում նույն կարգով, ինչ տվյալ պետության օրենսդրությամբ նախատեսված է որեւէ այլ ծանր տեսակի հանցագործության դեպքում:

2. Անձի համար, որի առնչությամբ դատաքննություն է իրականացվում 1-ին հոդվածում նախատեսված հանցագործությունների կատարման համար, երաշխավորվում է

արդարացի վերաբերմունք դատաքննության բոլոր փուլերում, ներառյալ՝ բոլոր իրավունքներից եւ երաշխիքներից օգտվելը այն պետության օրենսդրությանը համապատասխան, որտեղ նա գտնվում է:

ՀՈՂՎԱԾ 9

1. Հայցվող Կողմ պետության կողմից, սույն Կոնվենցիային համապատասխան, ենթադրյալ հանցագործի հանձնման վերաբերյալ խնդրանքը չպետք է կատարվի, եթե նա էական հիմքեր ունի ենթադրելու, որ՝

ա) անձին հետապնդելու կամ նրան պատժելու համար 1-ին հոդվածում սահմանված հանցագործությունների կատարման վերաբերյալ հանձնման մասին խնդրանքը տրվել է, ելնելով նրա ռասայական, կրոնական, ազգային կամ էթնիկական պատկանելությունից կամ քաղաքական հայացքներից, կամ

բ) տվյալ անձի վիճակին կարող է վնաս հասցվել՝

i) սույն կետի "ա" ենթակետով նախատեսված պատճառներից մեկով, կամ

ii) նրա պաշտպանությունն իրականացնելու իրավունք ունեցող պետության համապատասխան մարմինները չեն կարող կապվել նրա հետ:

2. Սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների նկատմամբ հանձնման վերաբերյալ Կողմ պետությունների միջեւ գործող բոլոր համաձայնագրերի եւ պայմանագրերի դրույթները այդ պետությունների հարաբերություններում կդիտվեն փոփոխված այնքանով, որքանով դրանք անհամատեղելի են Կոնվենցիային:

ՀՈՂՎԱԾ 10

1. 1-ին հոդվածում նշված հանցագործությունները՝ որպես հանձնման ենթակա հանցագործություններ, պետք է համարվեն ընդգրկված հանձնման վերաբերյալ Կողմ Պետությունների միջեւ գործող ցանկացած պայմանագրում: Կողմ Պետությունները պարտավորվում են այդ հանցագործությունները՝ որպես հանձնման ենթակա հանցագործություններ, ներառել իրենց միջեւ կնքվող հանձնման վերաբերյալ յուրաքանչյուր պայմանագրում:

2. Եթե Կողմ պետությունը, որը հանձնումը պայմանավորում է պայմանագրի առկայությամբ, հանձնման վերաբերյալ խնդրանքն ստանում է մեկ այլ Կողմ պետությունից, որի հետ հանձնման մասին պայմանագիր չունի, իր հայեցողությամբ կարող է սույն Կոնվենցիան ընդունել որպես իրավական հիմք 1-ին հոդվածում սահմանված հանցագործություններով հանձնում իրականացնելու համար: Հանձնումն իրականացվում է այն պետության օրենսդրությամբ նախատեսված պայմաններին համապատասխան, որին հանձնման մասին խնդրանք է ուղարկվել:

3. Կողմ պետությունները, որոնք հանձնումը չեն պայմանավորում պայմանագրի առկայությամբ, կարող են 1-ին հոդվածում նախատեսված հանցագործությունները միմյանց միջեւ դիտել որպես հանձնման ենթակա՝ այն պետության օրենսդրության պայմաններին համապատասխան, որին խնդրանքն ուղարկվել է:

4. 1-ին հոդվածում սահմանված հանցագործությունները կդիտվեն որպես հանձնման ենթակա, եթե դրանց կատարման վայր են հանդիսանում նաեւ այն պետությունների տարածքները, որոնք 5-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան հաստատել են իրենց իրավագործությունը:

ՀՈՂՎԱԾ 11

1. Կողմ պետությունները միմյանց առավել ամբողջական օգնություն են տրամադրելու 1-ին հոդվածով նշված հանցագործությունների վերաբերյալ գործերով քրեադատավարական գործողությունների իրականացման կապակցությամբ, ներառյալ՝ դատավարության համար անհրաժեշտ եւ իրենց տրամադրության տակ գտնվող ապացույցների տրամադրումը:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն ազդում փոխադարձ իրավական օգնության մասին որեւէ այլ պայմանագրով նախատեսված պարտավորությունների վրա:

ՀՈՂՎԱԾ 12

Այն դեպքում, երբ զինված հակամարտությունների ժամանակ կատարված պատանդներ վերցնելու հանցագործությունների նկատմամբ կիրառվում են Պատերազմից տուժած անձանց պաշտպանության մասին ժնեի 1949 թ. Կոնվենցիան կամ դրա լրացուցիչ արձանագրությունները, որոնցով Կողմ պետությունները պարտավորվում են դատական կարգով հետապնդել կամ փոխանցել պատանդներ վերցնող անձանց, ապա սույն Կոնվենցիան չի տարածվում դրանց նկատմամբ: Դա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ 1977 թ. N 1 Լրացուցիչ արձանագրության 1-ին հոդվածի 4-րդ կետի համաձայն ժողովուրդները պայքարում են գաղութատիրության, օտար զավթիչների եւ ռասիստական ռեժիմի դեմ՝ իրականացնելով իրենց ինքնորոշման իրավունքը, որն ամրագրված է Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ եւ դրան համապատասխան ընդունված՝ պետությունների միջեւ բարեկամական հարաբերություններին եւ համագործակցությանն առնչվող Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրով:

ՀՈՂՎԱԾ 13

Սույն Կոնվենցիան չի կիրառվում այն դեպքերում, երբ հանցագործությունը կատարվել է մեկ պետության շրջանակներում, պատանդը եւ ենթադրյալ հանցագործն այդ պետության քաղաքացիներ են եւ ենթադրյալ հանցագործը գտնվում է այդ պետության տարածքում:

ՀՈՂՎԱԾ 14

Ոչինչ սույն Կոնվենցիայում չի մեկնաբանվում որպես որեւէ պետության տարածքային ամբողջականությունը կամ քաղաքական անկախության խախտումը արդարացնող՝ ի հակադրում Միավորված ազգերի կազմակերպություն Կանոնադրության:

ՀՈՂՎԱԾ 15

Սույն Կոնվենցիայի դրույթները չեն ազդում սույն Կոնվենցիայի ընդունման ժամանակ գործող ապաստանի մասին պայմանագրերի կիրառման վրա՝ այդ պայմանագրերի Կողմ պետությունների միջեւ. սակայն սույն Կոնվենցիայի Կողմ պետությունը չի կարող դիմել այդ պայմանագրերի Կողմ այլ պետությունների օգնությանը, ինչպես նաև այդ պայմանագրերի մասնակից չհանդիսացող պետություններին:

ՀՈՂՎԱԾ 16

1. Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված երկու կամ ավելի Կողմ պետությունների միջև ծագող ցանկացած վեճ, որը չի կարող լուծվել բանակցությունների միջոցով, նրանցից մեկի խնդրանքով կարող է ներկայացվել արբիտրաժ: Եթե արբիտրաժի մասին խնդրանքը ներկայացնելու օրվանից վեց ամսվա ընթացքում Կողմերը համաձայնության չեն գալիս արբիտրաժի կազմավորման վերաբերյալ, ապա Կողմերից որեւէ մեկի խնդրանքով վեճը կարող է ներկայացվել Միջազգային դատարան՝ նրա Կանոնադրությանը համապատասխան:
2. Յուրաքանչյուր պետություն կարող է սույն Կոնվենցիան ստորագրելիս, վավերացնելիս կամ դրան միանալիս հայտարարել, որ պարտավորված չէ սույն հոդվածի 1-ին կետով: Մյուս Կողմ պետությունները նույնպես պարտավորված չեն սույն հոդվածի 1-ին կետով՝ նման վերապահում կատարած ցանկացած Կողմ պետության նկատմամբ:
3. Յուրաքանչյուր Կողմ պետություն, որը սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերապահում է արել, կարող է ցանկացած ժամանակ հրաժարվել դրանից՝ Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով:

ՀՈՂՎԱԾ 17

1. Սույն Կոնվենցիան ստորագրման համար բաց է բոլոր պետությունների համար մինչև 1980 թ. դեկտեմբերի 31-ը՝ Նյու Յորքում՝ Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում:

2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

3. Սույն Կոնվենցիան միանալու համար բաց է յուրաքանչյուր պետության համար: Միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

ՀՈՂՎԱԾ 18

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին վավերացման կամ միանալու մասին քսաներկուերորդ փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեսուն օր հետո:

2. Յուրաքանչյուր պետության համար, որը Կոնվենցիան վավերացրել է կամ դրան միացել է Կոնվենցիայի վավերացման կամ դրան միանալու մասին քսաներկուերորդ փաստաթուղթն ի պահ հանձնվելուց հետո, այն ուժի մեջ կմտնի նման պետության կողմից վավերացման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնվելու օրվանից երեսուն օր հետո:

ՀՈՂՎԱԾ 19

1. Յուրաքանչյուր Կողմ պետություն կարող է չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան՝ Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր քարտուղարին գրավոր ծանուցելու միջոցով:

2. Չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում ծանուցումը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի ստանալու օրվանից մեկ տարի անց:

ՀՈՂՎԱԾ 20

Սույն Կոնվենցիայի բնօրինակը, որի անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն եւ ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը սույն Կոնվենցիայի հաստատված պատճեններն ուղարկում է բոլոր պետություններին:

Ի հավաստումն որի, ներքոստորագրյալները՝ դրա համար պատշաճորեն լիազորված լինելով իրենց Կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Կոնվենցիան, որը ստորագրման համար բացվել է 1979 թվականի դեկտեմբերի 18-ին՝ Նյու Յորքում:

* Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004 թվականի ապրիլի 15-ից:

<http://untreaty.un.org/English/TreatyEvent2003/Texts/treaty15E.pdf>

No. 21931

International Convention against the taking of hostages

Adopted by the General Assembly of the United Nations on 17 December 1979

The states parties to this Convention,

Having in mind the purposes and principles of the Charter of the United Nations concerning the maintenance of international peace and security and the promotion of friendly relations and co-operation among States,

Recognizing in particular that everyone has the right to life, liberty and security of person, as set out in the Universal Declaration of Human Rights and the International Covenant on Civil and Political Rights,

Reaffirming the principle of equal rights and self-determination of peoples as enshrined in the Charter of the United Nations and the Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United Nations, as well as in other relevant resolutions of the General Assembly,

Considering that the taking of hostages is an offence of grave concern to the international community and that, in accordance with the provisions of this Convention, any person committing an act of hostage taking shall either be prosecuted or extradited,

Being convinced that it is urgently necessary to develop international cooperation between States in devising and adopting effective measures for the prevention, prosecution and punishment of all acts of taking of hostages as manifestations of international terrorism,

Have agreed as follows:

Article 1

1. Any person who seizes or detains and threatens to kill, to injure or to continue to detain another person (hereinafter referred to as the "hostage") in order to compel a third party, namely, a State, an international intergovernmental organization, a natural or juridical person, or a group of persons, to do or abstain from doing any act as an explicit or implicit condition for the release of the hostage commits the offence of taking of hostages ("hostage-taking") within the meaning of this Convention.

2. Any person who:

- a. Attempts to commit an act of hostage-taking, or
- b. Participates as an accomplice of anyone who commits or attempts to commit an act of hostage-taking likewise commits an offence for the purposes of this Convention.

Article 2

Each State Party shall make the offences set forth in article 1 punishable by appropriate penalties which take into account the grave nature of those offences.

Article 3

1. The State Party in the territory of which the hostage is held by the offender shall take all measures it considers appropriate to ease the situation of the hostage, in particular, to secure his release and, after

his release, to facilitate, when relevant, his departure.

2. If any object which the offender has obtained as a result of the taking of hostages comes into the custody of a State Party, that State Party shall return it as soon as possible to the hostage or the third party referred to in article 1, as the case may be, or to the appropriate authorities thereof.

Article 4

States Parties shall co-operate in the prevention of the offences set forth in article 1, particularly by:

a. Taking all practicable measures to prevent preparations in their respective territories for the commission of those offences within or outside their territories, including measures to prohibit in their territories illegal activities of persons, groups and organizations that encourage, instigate, organize or engage in the perpetration of acts of taking of hostages;

b. Exchanging information and co-coordinating the taking of administrative and other measures as appropriate to prevent the commission of those offences.

Article 5

1. Each State Party shall take such measures as may be necessary to establish its jurisdiction over any of the offences set forth in article 1 which are committed:

a. In its territory or on board a ship or aircraft registered in that State;

b. By any of its nationals or, if that State considers it appropriate, by those stateless persons who have their habitual residence in its territory;

c. In order to compel that State to do or abstain from doing any act;

or

d. With respect to a hostage who is a national of that State, if that State considers it appropriate.

2. Each State Party shall likewise take such measures as may be necessary to establish its jurisdiction over the offences set forth in article 1 in cases where the alleged offender is present in its territory and it does not extradite him to any of the States mentioned in paragraph 1 of this article.

3. This Convention does not exclude any criminal jurisdiction exercised in accordance with internal law.

Article 6

1. Upon being satisfied that the circumstances so warrant, any State Party in the territory of which the alleged offender is present shall, in accordance with its laws, take him into custody or take other measures to ensure his presence for such time as is necessary to enable any criminal or extradition proceedings to be instituted. That State Party shall immediately make a preliminary inquiry into the facts.

2. The custody or other measures referred to in paragraph 1 of this article shall be notified without delay directly or through the Secretary-General of the United Nations to:

a. The State where the offence was committed;

- b. The State against which compulsion has been directed or attempted;
 - c. The State of which the natural or juridical person against whom compulsion has been directed or attempted is a national;
 - d. The State of which the hostage is a national or in the territory of which he has his habitual residence;
 - e. The State of which the alleged offender is a national or, if he is a stateless person, in the territory of which he has his habitual residence;
 - f. The international intergovernmental organization against which compulsion has been directed or attempted;
 - g. All other States concerned.
3. Any person regarding whom the measures referred to in paragraph 1 of this article are being taken shall be entitled:
- a. To communicate without delay with the nearest appropriate representative of the State of which he is a national or which is otherwise entitled to establish such communication or, if he is a stateless person, the State in the territory of which he has his habitual residence;
 - b. To be visited by a representative of that State.
4. The rights referred to in paragraph 3 of this article shall be exercised in conformity with the laws and regulations of the State in the territory of which the alleged offender is present subject to the proviso, however, that the said laws and regulations must enable full effect to be given to the purposes for which the rights accorded under paragraph 3 of this article are intended.
5. The provisions of paragraphs 3 and 4 of this article shall be without prejudice to the right of any State Party having a claim to jurisdiction in accordance with paragraph 1(b) of article 5 to invite the International Committee of the Red Cross to communicate with and visit the alleged offender.
6. The State which makes the preliminary inquiry contemplated in paragraph 1 of this article shall promptly report its findings to the States or organization referred to in paragraph 2 of this article and indicate whether it intends to exercise jurisdiction.

Article 7

The State Party where the alleged offender is prosecuted shall in accordance with its laws communicate the final outcome of the proceedings to the Secretary-General of the United Nations, who shall transmit the information to the other States concerned and the international intergovernmental organizations concerned.

Article 8

1. The State Party in the territory of which the alleged offender is found shall, if it does not extradite him, be obliged, without exception whatsoever and whether or not the offence was committed in its territory, to submit the case to its competent authorities for the purpose of prosecution, through proceedings in accordance with the laws of that State. Those authorities shall take their decision in the same manner as in the case of any ordinary offence of a grave nature under the law of that State.
2. Any person regarding whom proceedings are being carried out in connexion with any of the offences set forth in article 1 shall be guaranteed fair treatment at all stages of the proceedings, including enjoyment of all the rights and guarantees provided by the law of the State in the territory of which he is present.

Article 9

1. A request for the extradition of an alleged offender, pursuant to this Convention, shall not be granted if the requested State Party has substantial grounds for believing:

- a. That the request for extradition for an offence set forth in article 1 has been made for the purpose of prosecuting or punishing a person on account of his race, religion, nationality, ethnic origin or political opinion; or
- b. That the person's position may be prejudiced:
 - i. For any of the reasons mentioned in subparagraph (a) of this paragraph, or
 - ii. For the reason that communication with him by the appropriate authorities of the State entitled to exercise rights of protection cannot be effected.

2. With respect to the offences as defined in this Convention, the provisions of all extradition treaties and arrangements applicable between States Parties are modified as between States Parties to the extent that they are incompatible with this Convention.

Article 10

1. The offences set forth in article 1 shall be deemed to be included as extraditable offences in any extradition treaty existing between States Parties. States Parties undertake to include such offences as extraditable offences in every extradition treaty to be concluded between them.

2. If a State Party which makes extradition conditional on the existence of a treaty receives a request for extradition from another State Party with which it has no extradition treaty, the requested State may at its option consider this Convention as the legal basis for extradition in respect of the offences set forth in article 1. Extradition shall be subject to the other conditions provided by the law of the requested State.

3. States Parties which do not make extradition conditional on the existence of a treaty shall recognize the offences set forth in article 1 as extraditable offences between themselves subject to the conditions provided by the law of the requested State.

4. The offences set forth in article 1 shall be treated, for the purpose of extradition between States Parties, as if they had been committed not only in the place in which they occurred but also in the territories of the States required to establish their jurisdiction in accordance with paragraph 1 of article 5.

Article 11

1. States Parties shall afford one another the greatest measure of assistance in connexion with criminal proceedings brought in respect of the offences set forth in article 1, including the supply of all evidence at their disposal necessary for the proceedings.

2. The provisions of paragraph 1 of this article shall not affect obligations concerning mutual judicial assistance embodied in any other treaty.

Article 12

In so far as the Geneva Conventions of 1949 for the protection of war victims or the Protocols Additional to those Conventions are applicable to a particular act of hostage-taking, and in so far as States Parties to this Convention are bound under those conventions to prosecute or hand over the hostage-taker, the present Convention shall not apply to an act of hostage-taking committed in the course of armed conflicts as defined in the Geneva Conventions of 1949 and the Protocols thereto, including armed conflicts mentioned in article 1, paragraph 4, of Additional Protocol I of 1977, in which peoples are fighting against colonial domination and alien occupation and against racist regimes in the exercise of their right of self-determination, as enshrined in the Charter of the United Nations and the Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United Nations.

Article 13

This Convention shall not apply where the offence is committed within a single State, the hostage and the alleged offender are nationals of that State and the alleged offender is found in the territory of that State.

Article 14

Nothing in this Convention shall be construed as justifying the violation of the territorial integrity or political independence of a State in contravention of the Charter of the United Nations.

Article 15

The provisions of this Convention shall not affect the application of the Treaties on Asylum, in force at the date of the adoption of this Convention, as between the States which are parties to those Treaties; but a State Party to this convention may not invoke those Treaties with respect to another State Party to this Convention which is not a party to those treaties.

Article 16

1. Any dispute between two or more States Parties concerning the interpretation or application of this Convention which is not settled by negotiation shall, at the request of one of them, be submitted to arbitration. If within six months from the date of the request for arbitration the parties are unable to agree on the organization of the arbitration, any one of those parties may refer the dispute to the International Court of Justice by request in conformity with the Statute of the Court.

2. Each State may at the time of signature or ratification of this Convention or accession thereto declare that it does not consider itself bound by paragraph 1 of this article. The other States Parties shall not be bound by paragraph 1 of this article with respect to any State Party which has made such a reservation.

3. Any State Party which has made a reservation in accordance with paragraph 2 of this article may at any time withdraw that reservation by notification to the Secretary-General in the United Nations.

Article 17

1. This Convention is open for signature by all States until 31 December 1980 at United Nations Headquarters in New York.

2. This Convention is subject to ratification. The instruments of ratification shall be deposited with the Secretary-General of the United Nations.

3. This Convention is open for accession by any State. The instruments of accession shall be deposited with the Secretary-General of the United Nations.

Article 18

1. This Convention shall enter into force on the thirtieth day following the date of deposit of the twenty-second instrument of ratification or accession with the Secretary-General of the United Nations.

2. For each State ratifying or acceding to the Convention after the deposit of the twenty-second instrument of ratification or accession, the Convention shall enter into force on the thirtieth day after deposit by such State of its instrument of ratification or accession.

Article 19

1. Any State Party may denounce this Convention by written notification to the Secretary-General of the United Nations.

2. Denunciation shall take effect one year following the date on which notification is received by the Secretary-General of the United Nations.

Article 20

The original of this Convention, of which the Arabic, Chinese, English, French, Russian and Spanish texts are equally authentic, shall be deposited with the Secretary General of the United Nations, who shall send certified copies thereof to all States.

IN WITNESS WHEREOF, the undersigned, being duly authorized thereto by their respective Governments, have signed this Convention, opened for signature at New York on 18 December 1979.